

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՔԵԹՐԻՆ ՄԱՔԱՈՒԼԵՅԻ ԵՎ ԹՈՄԱՍ
ՀՈՐՄԻ**

Էյա ՂԻԱՍՅԱՆ
ՀՊՄՀ ասպիրանտ

Բանալի բառեր. հանրապետության, միապետություն, կառավարման համակարգ,
հասարակություն, իշխանություն

Քեթրին Մաքաուլեյն իր “Պարզորոշ դիտողություններ պարոն Հոբսի
“Կառավարության և հասարակության մասով փիլիսոփայական տարրեր”
գրքում արծարծված հիմնական դրույթների վերաբերյալ, պարոն Պաուլին
ուղղված նամակում կառավարության դեմոկրատական ձևի մասին համա-
ռոտ ակնարկի հետ” աշխատությամբ նպատակ ունի ներկայացնել Թոմաս
Հոբսի համապատասխան գրքում արծարծված կարևորագույն խնդիրները
կառավարման տարատեսակների վերաբերյալ:

Մաքաուլեյի աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջին
հատվածում նա նպատակ ունի ներկայացնել Հոբսի տեսակետը կառա-
վարման համակարգի լավագույն տեսակի, մասնավորապես միապետության
մասին վերջինիս հակադրելով իր սեփական տեսակետը ընդգծելով կառա-
վարման այս համակարգի թերությունները և բաղդատելով այն հանրապե-
տական կառավարման ձևի հետ:

Երկրորդ մասում հեղինակը Պաուլին ուղղված իր նամակում խորհուրդ
է տալիս Կորսիկայում հաստատել կառավարման հանրապետական կար-
գեր միաժամանակ անդրադառնալով կառավարման այս տեսակի առանձ-
նահատկություններին: Այս աշխատությունում Մաքաուլեյը Հոբսի միա-
պետական կառավարման համակարգը ներկայացնելիս անդրադառնում է
բազմաթիվ փաստերի, պնդումների, հիմնավորումների, որոնք վերլուծելով
հակադրում է հանրապետական կառավարման մոդելին ապացուցելով միա-
պետական կառավարգի տարբեր պնդումների վերաբերյալ վերջինիս սխա-
լականությունը:

Նախ և առաջ նա սկսում է Հոբսի այն պնդման ներկայացմամբ,
համաձայն որի մարդիկ սոցիալականացված չեն իրենց բնույթով: Հոբսը
հեքքում է այն տեսակետը, համաձայն որի մարդը հասարակությանը հա-
մապատասխան և պիտանի էակ է մտադրություն ունենալով այս փաս-
տարկը հիմնավորելու ճանապարհով ներկայացնել միապետական կարգի
առավելությունները մյուսների համեմատ: Նա նշում է հետևյալը “Մարդը չի
կարող ինտեգրվել հասարակությանը սիրուց դրդված այլ օգուտ ստանալու
նպատակով միայն” (Macaulay, Catharine, 1767): Իր այս տեսակետը հիմ-

նավորելու համար Հոբսը ներկայացնում է բազմաթիվ փաստեր հատկապես շեշտելով, որ բանականությունը բնության այն օրենքն է, որը տրված է Աստծո կողմից, որպեսզի մարդիկ կառավարեն իրենց գործողությունները և օգտագործեն ի բարօրություն հասարակության: Սակայն ի հակադրություն այս տեսակետի նա ավելացնում է, որ “Մանուկները ծնվում են առանց բանականության հետևաբար մարդը էակ է ով չի համապատասխանում և չի կարող պիտանի լինել հասարակությանը” (Macaulay, Catharine, 1767): Հեղինակը Հոբսի տեսակետը մեջբերելուց հետո գրում է “Չնայած մանուկները ծնվում են առանց բանականության, նրանք միաժամանակ ունեն հատկություններ այն ձեռք բերելու համար: Այսպիսով մարդը ծնված լինելով անհրաժեշտ միջոցներով կարող է ձեռք բերել բանականություն, իսկ բանականության պարագայում մարդը դառնում է հասարակությանը համապատասխան և պիտանի էակ”: (Macaulay, Catharine, 1767): Մեր կարծիքով այս պնդմամբ Մաքաուլեյը ցույց է տալիս, որ Հոբսի մեջբերումը հերքելու այս տեսակետը ձախողվում է: Այսպիսով Մաքաուլեյը ապացուցում է, որ մարդը հասարակությանը համապատասխան և պիտանի էակ է:

Շարունակելով Մաքաուլեյը ներկայացնում է պարոն Հոբսի իշխանության տարբեր տեսակների վերաբերյալ պատկերացումները: Հոբսի քաղաքական արժեհամակարգը մեր կարծիքով լավագույնս հասկանալու համար պետք է նշել, որ մի կողմից նա մերժում է թագավորի իշխանության աստվածային իրավունքի տեսությունը: Մյուս կողմից հերքում է պառլամենտականների վաղ դեմոկրատական համակարգը, համաձայն որի իշխանությունը պետք է բաժանվի պառլամենտի և թագավորի միջև: Ուսումնասիրությունների արդյունքում ես եկել եմ այն եզրահանգման, որ մերժելով այս երկու տեսակետները Հոբսը ներկայացնում է մի տեսակետ, որը որի քաղաքական իշխանությունը հիմնված է հասարակության անդամների անհատական հետաքրքրությունների վրա, ովքեր պետք է հավասար լինեն իրար առանց որևէ մեկի իշխանության կառավարելու մյուսներին մինչդեռ միևնույն ժամանակ պահպանելով պահպանողական դիրքորոշում, ըստ որի միապետը պետք է հրաժարվի բացարձակ իշխանությունից (Robert P. Kraynak, 1990):

Ավելին, Հոբսի քաղաքական գաղափարները ավելի խորը հասկանալու համար անհրաժեշտ է այն բաժանել երկու մասի, մասնավորապես նրա մարդկային մոտիվացիայի մասին տեսության, այսինքն հոգեբանական եսասիրության և հասարակական դաշինքի վերաբերյալ տեսության հիմնված բնության պետության ենթադրական տեսության վրա (Noberto Bobbio, 1993), Մաքաուլեյը մեր կարծիքով դիպուկ է այստեղ նկատել, որ հեղինակի ներկայացրած խառնաշփոթից ակնհայտ է, որ պարոն Հոբսը կամ կամայականորեն կամ անգիտությամբ շփոթում է բացարձակ և սահմանափակ իշ-

խանութիւնները: “Ըստ նրա որոշները իշխանություն ունեն պատժել նրանց, ովքեր խախտել են օրենքները: Այսպիսով մեկ կամ մի քանի պաշտոնյաների ձեռքերում կենտրոնացված իշխանությունը հաստատված օրենքների մատով սահմանված պատիժները իրավախախտների նկատմամբ կիրառելու լիազորություններ ունեցող մարմինը իր բնույթով գործադիր է: Այս իշխանությունը կարող է կիրառվել մեղավորի նկատմամբ հաստատված օրենքերի միջոցով, այսպիսով մեղավորը համապատասխան պատիժը կրում է օրենքով, այլ ոչ թե այն կիրառողի կամքով: Այսպիսով կան արքայական արտոնություններ, որոնք միացված են այս գործադիր իշխանությանը, որն անվանվում է սահմանափակ իշխանություն, քանի որ սահմանափակված է վերոնշյալ օրենքներով, որոնք գործադիր նշանակություն ունեն: Եթե իշխանությունը սահմանափակված չէ, ապա այն իր բնույթով բացարձակ է” (Macauley, Catharine, 1767): Ինչպես և ըստ Մաքաուլեյը իմ կարծիքով նույնպես Հոբսը իշխանության բացարձակ և սահմանափակ տեսակները ներկայացնում է շատ անորոշ, խառնաշփոթ ձևով հստակ չզատորոշելով միապետական համակարգի ձևավորման ամբողջական պատկերը:

Հաջորդիվ Մաքաուլեյը բնութագրում է պարոն Հոբսի միապետական կառավարման ձևի կազմավորման առանձնահատկությունների հետ աղերսվող պնդումը: Նա նշում է, որ “միապետական իշխանությունը բխում է ժողովրդի իշխանությունից, որը վերջինս փոխանցում է մեկ մարդու: Ամբողջ իշխանությունը փոխանցելով մեկին, այնուհետև ժողովուրդը դադարում է մեկ հավաքական ամբողջություն լինելուց և վերածվում է ամբոխի: Տրամաբանական է, որ ընտրված միապետը չի կարող վնաս պատճառել իր ենթականերին, քանի որ վերջիններս իրենց պաշտպանելու իրավունքը և կամքը փոխանցել են միապետին” (Leo Strauss, 1952, C. B. Macpherson, 1962):

Շարունակելով միապետական համակարգի առանձնահատկությունների վերաբերյալ Հոբսի ներկայացմանը անդրադարձնալու Մաքաուլեյը այնուհետև շեշտադրում է այն պայմանագիրը, որին անդրադարձել է Հոբսը: Նա նշում է այդ պայմանագրի մի հատվածը հանգամանալից մեկնաբանելով այն: “Կնքված լինելով երկու կողմերի միջև այն պետք է հավասարապես պարտավորեցնող լինի: Ըստ Պարոն Հոբսի եթե կողմերից մեկը դադարում է պարտավորություն ունենալ, ապա դադարում է նաև մյուսը: Այս իրավիճակում, եթե միապետը մերժում է իրականացնել այն բոլոր պարտավորությունները, որոնք վերջինիս տրվել էին իշխանության հետ նա իր այդ գործողությամբ զրկվում է իշխանության իրավունքից: Այդ իրավունքը վերադառնում է ժողովրդին” (Macauley, Catharine, 1767):

Հետաքրքրական է, որ Մաքաուլեյը շարունակելով հետազոտել այս հեղինակի աշխատությունը ներկայացնում է ծնողների և երեխաների միջև

Հոբսի նկարագրած փոխհարաբերությունները կառավարման այս ձևի ավելի լավ մեկնաբանման համար: Հոբսը գրում է, որ “Ծնողները իշխանություն չունեն իրենց երեխաների նկատմամբ ելնելով սերունդների նկատմամբ իրավունքից: Այս իրավունքը պատկանում է մորը ոչ թե հաշվի առնելով վերոնշյալ իրավունքը, այլ քանի որ մոր սեփական կամքն է հոգ տանել կամ բախտի քմահաճույքին թողնել երեխային: Եթե մայրը դաստիարակում և խնամում է իր երեխային դեռևս չի նշանակում, որ վերջինս ենթակա է դառնում իրեն” (Macaulay, Catharine, 1767): Այս գաղափարի մասով Մաքաուլեյի տեսակետները հետազոտելուց հետո ես եկել եմ այն եզրահանգման, որ նա համակարծիք է Հոբսի հետ: Պարոն Հոբսը միապետության ի տարբերություն մյուս կառավարման տեսակների առավելությունների ընդգծման համար ներկայացնում է չորս կարևորագույն հատկանիշներ, որոնցով այն զատվում է մյուսներից: Նախ և առաջ հեղինակը թվարկում է դրանք, ապա հանգամանալից մեկնաբանում: Համաձայն առաջինի ամբողջ տիեզերքը կառավարվում է մեկ Աստծո կողմից: Երկրորդ, մեր նախնիները նախընտրել են պետության միապետական տարբերակը: Երրորդն այն է, որ Աստծո կողմից ստեղծված հայրիշխանությունը միապետական է: և ըստ չորրորդի կառավարման մյուս տեսակները ձևավորվել են միապետականի հիմքի վրա (Macaulay, Catharine, 1767):

Հաջորդիվ Մաքաուլեյը ներկայացնում է Հոբսի կարծիքը յուրաքանչյուրի վերաբերյալ (Hill, Bridget, and Christopher Hill, 1967): Նա համաձայն է առաջինի հետ, որ տիեզերքը կառավարվում է մեկ Աստծո կողմից: Հետևաբար նա ունի աներկբայելի իրավունք կառավարել այն ամենը ինչ ինքն է ստեղծել: Սակայն սա չի վերաբերում այն մարդուն, ով չի ստեղծել այդ ամենը և ում հետ ազգը չի կարող ունենալ վերոնշյալ հայրական կապը: Հետևաբար մեր կարծիքով այս պարագայում Հոբսի տեսակետը չլուծված է մնում: Երկրորդ պնդումը համաձայն որի մեր նախնիները նախընտրում էին միապետական կառավարման համակարգը մյուսների համեմատ ըստ Մաքաուլեյի մի պնդում է, որը հերքվում է հնագույն հասարակությունների օրինակով: Երրորդ պնդումը համաձայն որի Աստծո կողմից հաստատված հայրիշխանությունը միապետական բնույթ ուներ: Մաքաուլեյը նշում է, որ այս պնդումը նույնպես հերքվում է պատմության մեջ հանդիպող բազմաթիվ օրինակներով: Հետևաբար, մեր կարծիքով նրա պնդումը չի կարող արժանահավատ լինել: Վերջին պնդումը կապված է այն փաստարկի հետ, համաձայն որի կառավարման մյուս տեսակները կազմավորվել են հիմք ունենալով միապետությունը (Macaulay, Catharine, 1767):

Շարունակելով Հոբսը նշում է, որ ոմանք դժգոհ են միապետական կառավարման համակարգից այն պատճառով, որ անտրամաբանական է, որ

մեկը կարողանա բոլոր դժվարությունները հաղթահարելով հասնել բարձունքների միաժամանակ ազատվելով իր բոլոր հակառակորդներից: Դժգոհությունը ընդդեմ մեկի ըստ Հոբսի պայմանավորված է նախանձով: Հոբսը մեջբերում է հետևյալը "Մենք ցույց ենք տվել, որ հավասարության վրա հիմնված պետությունը պատերազմի պետություն է և այսպիսով անհավասարությունը ներկայացվել է ընդհանուր համաձայնությամբ:" Վերոնշյալ պնդման վերաբերյալ Մաքաուլեյը նշում է, որ պարզ է այն համոզմունքը համաձայն որի այս փիլիսոփան անտեղյակ է այն ճշմարտության մասին, որ քաղաքական հավասարությունը և լավ կառավարման օրենքները այնքան համատեղելի են միմյանց հետ, որ մեկը չի կարող կատարելության հասնել առանց մյուսի: Մաքաուլեյը հաջորդիվ ներկայացնում է Հոբսի միապետական համակարգի հետ կապված որոշ այլ թերություններ անմիջապես տալով վերջիններիս հետ կապված իր կարծիքը: Հոբսը գրում է "Ես խոստովանում եմ, որ ժողովրդի կողմից դժգոհություն կարող է առաջացնել այն հանգամանքը, որ բացի իր արքունական ծախսերից գահակալը գանձարանից գումար է հատկացնում նաև իր որդիներին, ազգակիցներին, սիրելիներին և իրեն քծնողներին: Սակայն միապետի անմիջական խնամակալության տակ գտնվողների թիվը ի տարբերություն կառավարման այլ համակարգերի ենթակաների թվաքանակի համեմատաբար ավելի սակավ է": Մաքաուլեյը ընդգծում է այն փաստը, որ "Ճիշտ է միապետի որդիների, ազգակիցների և սիրելիների թվաքանակը քիչ է մինչդեռ նրան քծնող մարդիկ կարող են շատ լինել, քանի որ վերջիններս հետևում են քաղաքական իշխանությանը այլ ոչ թե անձին": Ներկայացնելով մի շարք պատմական օրինակներ, ի վերջո, պարոն Հոբսը եզրակացնում է, որ ժողովրդավարության դեպքում կան բազմաթիվ հզոր ընտանիքներ, որոնք պետք է պարզևատրվեն հետևաբար ավելի նախընտրելի է միապետական կառավարման ձևը, որտեղ այսպիսի ընտանիքների քանակը ավելի քիչ է (Macaulay, Catharine, 1767): Ի հակադրություն Մաքաուլեյը բերում է այն հակափաստարկը, համաձայն որի արժանի մարդիկ միշտ պարզևատրվել են հանրապետական կառավարման համակարգում գերազանցապես համեստորեն: Ի լրումն "Եթե, գրում է Մաքաուլեյը, հանգամանքների բերումով անարժան մարդիկ էին առաջ քաշվում բարձր պաշտոններում, ապա վերջիններս երկար չէին մնում այդ պաշտոններում: Այս պարագայում միապետերը գործում են այլ կերպ: Մասնավորապես դա միշտ նրանց պատասխանատվությունն է պաշտոններում նշանակել անարժան գործիչների և իրոք հանրապետական կառուցների և միապետերի գործառնությունները սովորաբար շատ տարբեր են լինում: Հանրապետական կառույցների պարտավորությունն է առաջ քաշել այն մարդկանց ուն առաքինությունները և ունակությունները ամենահամապատասխանն են ծառայելու իրենց երկրին: Ի տարբերություն դրան միապետի դեպքում սո-

վորաբար իշխանությունը միտված է բավարարել իր սեփական սեփական շահերը, որոնք համատեղելի չեն հանրային բարօրության հետ” (Boos, Florence, and William Boos, 1980; Macaulay, Catharine, 1767):

Մաքաուլեյը շարունակելով ընդգծում է միապետության հետ կապված Հոբսի նշած մյուս թերությունները: Առաջին, Պարոն Հոբսը բնական վիճակի և քաղաքացիական կարգավիճակի համեմատության ժամանակ նշում է, ինչի հետ համամիտ է նաև Մաքաուլեյը, որ միապետի նկատմամբ ենթակաների դժգոհությունը սկիզբ է առնում կառավարության սխալ վարչակազմից: Սակայն Մաքաուլեյը ավելացնում է, որ եթե “Պարոն Հոբսը լավ տեղեկացված լիներ քաղաքականությանը, ապա նա կգիտակցեր, որ պատշաճ հաստատված կառավարության գերազանցությունը կայանում է նրանում, որ այն վարչակազմի մեջ ընդգրկում է այն գործիչներին, ովքեր օժտված են այնպիսի առաքինություններով և ունակություններով, որոնք թույլ են տալիս իրականացնել այս դժվարին աշխատանքը: և իհարկե այդ գործից հեռացնել նրանց, ովքեր չեն համապատասխանում և անկարող են այն կատարել: Այսպիսով վատ հաստատված կառավարությունը չի կարող երկար շարունակել իր գործունեությունը և հետևաբար կարող է դժգոհություն առաջացնել ժողովրդի մեջ” (GuntherCanada, 2006): Երկրորդը կապված է մահվան նկատմամբ միապետի ենթակաների հավերժական վախի հետ: “Այս զգացողությունը պետք է ունենա յուրաքանչյուր մարդ, երբ նա մտածում է, որ կառավարիչը ուժ և իշխանություն ունի ոչ միայն սահմանել թե ինչ պատիժներ են կիրառելի ցանկացած իրավախախտման դեպքում, այլ նաև նա իր սաստիկ զայրույթի ժամանակ կարող է մահապատժի ենթարկել իր անմեղ ենթականերին: Սակայն սա անհատի բնութագրի հարցն է, այլ ոչ թե կառավարման ձևի ընդհանրապես: Ավելին, թագավորները դաժան են միայն նրանց նկատմամբ ովքեր անհանգստացնում են իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարմամբ կամ հակառակվում են վերջիններիս կամքին”: Հոբսի այս տեսակետի վերաբերյալ Մաքաուլեյը ներկայացնում է իր բացատրությունը համաձայն որի, եթե “Կառավարման բնույթը թույլ չի տալիս նրան գործադրել այդ միջոցառումները իր հակումները միայն իրավունք չեն ընձեռի նրան դա կատարել: Հետևաբար այս վնասները իրականացնելու նրա որոշումը պետք է բխի նաև կառավարման համակարգի արատավոր բնույթից”: Այս տեսակետը մեր կարծիքով հիմնավորապես ապացուցում է Հոբսի սխալականությունը միաժամանակ շեշտելով միապետական համակարգի այս թերությունը: Այնուհետև Մաքաուլեյը ներկայացնում է Հոբսի կարծիքով միապետի այսպիսի գործողությունների դրդապատճառները: Հատկապես կարևոր է համարում, որ “Եթե միապետի խորհրդականները չեն կարող ճիշտ խորհուրդ տալ ազգի համար կարևորագույն նշա-

նակության հարցերում, ապա անփորձառությունը, անտեղյակությունը կամ հիմարությունը կխոչընդոտեն միապետին անաչառ դատել անձանց և ինքնուրույն որոշումներ կայացնել: Սա անհնարին է դարձնում կանխարգելել այն աղետները, որոնց պետք է բախվի ազգը այսպիսի միապետի կողմից կառավարվելու պարագայում” (Macaulay, Catharine, 1767):

Սակայն արդարացնելու համար միապետի այս գործողությունները Հոբսը նշում է, որ “արժանիորեն տառապում են այն մարդիկ, ովքեր աչքի են ընկել իրենց սխալ գործողություններով և արժանի են իրենց համար սահմանված պատիժներին”: Սակայն ցանկալանով վերջնականապես ապացուցել միապետական կարգերի անհրաժեշտությունը Հոբսը ներկայացնում է մարդկային բնույթի նախադրյալները, որոնք հաստատում են ինքներս մեզ միապետական քաղաքական իշխանությանը ենթարկելու կարևորությունը: Նա սա անում է երևակայելով նախքան հասարակության հաստատումը բնության պետության շրջանակներում անձանց կարգավիճակը: Համաձայն նրա մարդիկ բնականից շահախնդիր են և այսպիսով նրանք պետք է ընտրեն ենթարկվել սուվերենի իշխանությանը, որպեսզի կարողանան ապրել քաղաքացիական հասարակությունում, որը նպաստում է նրանց սեփական հետաքրքրություններին ու շահերին: Ի հակադրություն բնության պետության մեջ յուրաքանչյուր անձ միշտ կվախենա իր կյանքը կորցնելու վտանգից: Այստեղ ոչ մի երկարատև և բարդ համագործակցություն հնարավոր չէ, քանի որ բնության պետությունը կարելի է դիպուկ բնութագրվել որպես լիակատար անվստահության պետություն (Green, Karen, 2012; Cláudio R. C. Leivas, 2012): Ներկայացնելով Հոբսի ենթադրությունը, համաձայն որի, բազմաթիվ մարդիկ ցանկանում են առաջնահերթ ապահովագրել իրենց մահից նա եզրակացնում է, որ բնության պետությունը ամենավատ հնարավոր իրավիճակն է, որում մարդիկ կարող են հայտնվել: Սա հավերժական և անխուսափելի պատերազմի պետությունն է: Սակայն գիտակցելով և ըմբռնելով բնության օրենքները մարդիկ կարող են ստեղծել քաղաքացիական հասարակություն: Առաջին և ամենակարևոր բնության օրենքը պատվիրում է, որ յուրաքանչյուր մարդ պետք է պատրաստակամ լինի հետամուտ լինել խաղաղությանը: Հետևաբար մարդիկ կարող են ստեղծել հասարակական դաշինք, որը հնարավորություն կտա նրանց ապրել խաղաղ: Հասարակությունը հնարավոր է դառնում, քանի որ ի տարբերություն բնության պետության այժմ կա արհեստական, պայմանականորեն վերադաս և ավելի հզոր անձ, ով կարող է ստիպել մարդկանց համագործակցել իրար հետ (Robert P. Kraynak, 2011):

Ներկայացնելով բնության պետության և հասարակական դաշինքի գաղափարները Հոբսը ըստ իս փորձում է հիմնավորել միապետական կարգի անհրաժեշտությունը: Հոբսը իր միապետական կարգի կազմաքանդման

հնարավոր վտանգի մասին գրում է հետևյալը “Քանի որ պետության վերջնական նպատակը ժողովրդի պաշտպանությունն է, երբ այն չի կարողանում պաշտպանել իր քաղաքացիներին այլևս իմաստ չկա վերջինիս հետագա գոյության համար: Լավ կառուցվածք ունեցող պետությունում ինքնիշխանության հիմնական իրավունքները հարգվում են և քաղաքական իշխանության բացարձակ բնույթը հաստատվում և արդյունավետորեն կիրառվում է: Սակայն տարատեսակ դրդապատճառներով առաջնորդվելով մարդիկ թշնամական գործողություններ են ձեռնարկում սուվերենի իշխանության դեմ այսպիսով հանգեցնելով պետության կազմաքանդմանը” (Cláudio R. C. Leivas, 2012): Այս իրողությամբ նա շեշտում է թե ինչպիսի աղետների կարող է բախվել ազգը միապետության կործանման դեպքում:

Այս գրքի հաջորդ բաժինը ներկայացնում է Մաքսուելյի նամակը ուղղված Պաուլին Կորսիկայում հանրապետական կարգերի հաստատման համար: Մաքսուելյը այստեղ Պաուլին բնութագրում է հանրապետական կառավարումը որպես կառավարման լավագույն ձև: Մաքսուելյը ձգտելով հատկորոշել ժողովրդավարական հանրապետությունից բխող առավելությունները հատկապես նշում է երկուսը: Առաջինը վերաբերում է այս կառավարման համակարգի կարևորագույն առանձնահատկություններին: Երկրորդը ներկայացնում է սահմանադրության այն հատվածը որտեղ նշվում են այն մեխանիզմները, որոնց հաջող կիրառման դեպքում հնարավորինս նվազում է կաշառակերությունը: Անդրադառնալով առաջին առանձնահատկությանը Մաքսուելյը նշում է, որ կառավարման ինստիտուտը պետք է բաժանվի երկու կառույցի, որոնք են սենատը և ժողովուրդը (այստեղ նա ժողովուրդը բառն է նշվում, սակայն ուսումնասիրելով այս կառույցի գործառույթները այն ըստ իս համայնքների պալատն է ներկայացնում): Նա առաջարկում է սենատի մեջ ներգրավել հիսուն ներկայացուցիչ կանխելու համար այն խառնաշփոթը, որը սովորաբար առաջանում է չափից ավելի մեծ թվաքանակով ասամբլեաների դեպքում: Ի հակադրություն սրան համայնքների պալատի ներկայացուցիչների թվաքանակը պետք է լինի 250-ից ոչ պակաս ընտրված մի քանի շրջաններից կամ քաղաքներից, որոնց բաժանված է երկիրը: Գեներալները, ծովակալները, քաղաքացիական դատավորները և յուրաքանչյուր կարևոր դիրքի պաշտոնյա պետք է հեռացվի սենատից, այսինքն վերջիններս ազատվում են սենատորներ նշանակվելու իրավունքից ունենալով սենատում քվեարկելու արտոնություն միայն պաշտոնավարության ընթացքում այնտեղ չընտրվելու պայմանով: Այս պաշտոնյաների նշանակման լիազորությունը պատկանոոմ է համայնքների պալատին:

Հեղինակը առաջարկում է, որպեսզի սենատը գումարվի յուրաքանչյուր շաբաթ երեք անգամ կամ երբեմն այնպիսի հաճախականությամբ, ինչպես

պահանջում է անհրաժեշտությունը: Ի տարբերություն դրան համայնքների պալատին առաջարկում է հանդիպել սահմանված օրերին կամ երբեմն այնպիսի հաճախականությամբ, ինչպես պահանջում է անհրաժեշտությունը: Հաջորդիվ քննարկվում են ներքին քաղաքականությանը, մասնավորապես առևտրին, ինչպես նաև գործադիր իշխանության այսինքն կառավարության գործունեության հետ կապված հարցերը, որոնց վերաբերող որոշումները և օրենքները հեղինակը առաջարկում է որ ընդունվեն համայնքների պալատի կողմից սենատում նախապես քննարկելուց հետո: Սակայն խաղաղության, պատերազմի, հարկերի, օրենքների մշակումը և փոփոխումը պետք է քննարկվեն սենատում, այնուհետև ներկայացվեն համայնքների պալատին (Macaulay, Catharine, 1767):

Ներկայացնելով հանրապետության կառավարման համակարգը Մաքաուլեյը այնուհետև իր ուշադրությունը բևեռում է վերջինս կաշառակերությունից պաշտպանելու մեխանիզմի վրա: Հեղինակը առաջարկում է սահմանել երկու օրենք, մասնավորապես պաշտոնյաների շրջանառությունը և գյուղատնտեսության պատշաճ բալանսավորումը: Այս խնդրի լուծմամբ կկանխարգելվի հողային տիրույթների անհամամասնորեն բաժանումը քաղաքացիներին, որի մեծաքանակ կենտրոնացումը արիստոկրատիայի շահերը ներկայացնող կուսակցության ձեռքին հնարավորություն կտա նրանց փոխակերպել երկրի կառավարման համակարգի հիմնարար սկզբունքները, որոնք ի վերջո կհանգեցնեն անիշխանության: Մաքաուլեյը նկարագրելով այս իրավիճակը այնուհետև ներկայացնում է համապատասխան կարգավորումները սահմանող լավագույն մեթոդները: Առաջինը շրջապտույտի մեթոդն է: Նա առաջարկում է որպեսզի սենատի կազմը փոփոխվի յուրաքանչյուր երեք տարին մեկ, իսկ մեկ երրորդը յուրաքանչյուր տարի: Միաժամանակ թափուր պաշտոններում ժողովրդի ընտրությամբ կարող են նշանակվել համայնքների պալատի անդամները: Կարևորագույն դրույթ էր այն, որ նշյալ մարմինը պետք է համալրվի համայնքների պալատի ներկայացուցիչներով: Եթե համայնքների պալատի անդամները ընտրվեն սենատ, ապա նրանց շարքերը պետք է համալրվեն ժողովրդից: Հեղինակը շեշտում է, որ ոչ սենատի և ոչ էլ համայնքների պալատի անդամները չպետք է վերընտրվեն երկրորդ անգամ երեք տարի անց: Ինչ վերաբերվում է ծովակալներին, գեներալներին, քաղաքացիական դատավորներին և բոլոր կարևորագույն պաշտոնների ներկայացուցիչներին, ապա վերջիններս պետք է վայր դնեն իրենց պարտականությունները մեկ տարի անց առանց վերընտրվելու հնարավորության:

Այնուհետև Մաքաուլեյը ներկայացնում է ագրարային հարաբերությունների կարգավորման մեխանիզմը: Հողային տիրույթների հավասարակշռության երկարատև պահպանման համար նա առաջարկում է դրանք բաժանել

արու ժառանգների մեջ: Եթե ցանկացած մարդ իր կյանքի ընթացքում նվիրաբերի իր հողային տիրույթը այս օրենքին հակառակ, ապա ժառանգները կարող են դատարանի միջոցով ձեռք բերել իրենց հասանելիքը:

Շարունակելով Մաքաուլեյը մի հետաքրքիր փաստ է ներկայացնում: Այն դեպքում, եթե անհրաժեշտ լինի գործադիր իշխանությունը կենտրոնացնել մեկ անձի ձեռքում դա կարող է կյանքի կոչվել միայն մեկ ամիս ժամանակահատվածով: Այս անձին նշանակելու իրավունք է վերապահվում միայն համայնքների պալատին: Նմանատիպ իրավիճակը կարող է շարունակվել ամեն ամիս, եթե պետության առաջնահերթությունները այդպես են պահանջում: Սակայն ընդգծվում է, որ մեկ տարուց ավելի որևէ մեկը չի կարող իր ձեռքում կենտրոնացնել այդ լիազորությունները: Մաքաուլեյը նաև շեշտում է, որ պետք է աշխատեն դիկտատոր երբևէ չունենալ այլ միայն ծայրահեղ հանգամանքներում: Ամփոփելով Մաքաուլեյը նշում է, որ սա կառավարման միակ ձևն է, որն ունակ է պահպանելու ժողովրդի իշխանությունը և ազատությունը:

Օգտագործված գրականություն

1. Gunther Canada, 2006, “Catharine Macaulay on the Paradox of Paternal Authority in Hobbesian Politics,” *Hypatia*, 21(2): 150–173.
2. Macaulay, Catharine, 1763–83, *The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line*, 8 volumes, London: Printed for the 18 author and sold by J. Nourse, J. Dodsley and W. Johnston. (Volumes 5–8 are titled *The history of England from the accession of James 1. to the Revolution*, London: C Dill)
3. Macaulay, Catharine, 1767, *Loose Remarks on certain positions to be found in Mr Hobbes’s “Philosophical rudiments of government and society,”* London: T. Davies, in Russell-street, Covent Garden; Robinson and Roberts, in Pater-noster Row; and T. Cadell, in the Strand 14
4. Boos, Florence, and William Boos, 1980, “Catharine Macaulay: Historian and political reformer,” *International Journal of Women’s Studies*, 3 (6): 49–65.
5. Green, Karen, 2012a, “Catharine Macaulay: Philosopher of the Enlightenment,” *Intellectual History Review*, 22 (3): 411–426
6. Hill, Bridget, and Christopher Hill, 1967, “Catharine Macaulay and the Seventeenth Century,” *The Welsh History Review*, 3: 381–402.
7. Israel, Jonathan, 2010, *A Revolution of the Mind: Radical Enlightenment and the Intellectual Origins of Modern Democracy*, Princeton: Princeton University Press.
8. Pettit, Philip, 1997, *Republicanism: A Theory of Freedom and Government*, Oxford: Clarendon Press.
9. Robert P. Kraynak, *The Behemoth: Doctrinal Politics and the English Civil War*, ch. 3 in *History and Modernity in Thought of Thomas Hobbes*, N.Y.: Cornell University Press, 1990, 32–68.
10. Noberto Bobbio, *Thomas Hobbes and the Natural Law Tradition*, trans. Daniela Gobetti (Chicago: University of Chicago Press, 1993), 167–71
11. Leo Strauss, *The Political Philosophy of Hobbes: Its Basis and Genesis*, trans., E. M. Sinclair (1936; repr., Chicago: University of Chicago Press, 1952), 118–28.
12. C. B. Macpherson, *The Political Theory of Possessive Individualism: Hobbes to Locke* (London: Oxford University Press, 1962), 61–68
13. Cláudio R. Leivas, *The science of preservation of state: Hobbes and the question of dissolution and maintenance of modern political state*, *Veritas Porto Alegre* v.57n.12012 p.26-40.

Էյա ԴԻԱՍՅԱՆ

Կառավարման միապետական և հանրապետական համակարգերի առանձնահատկությունները ըստ Քեթրին Մաքաուլեյի և Թոմաս Հոբսի

Բանալի բառեր: հանրապետության, միապետություն, կառավարման համակարգ,
հասարակություն, իշխանություն

Մաքաուլեյը իր աշխատությունում ներկայացնում է Հոբսի գրքում արծարծված կառավարման համակարգերի մասնավորապես միապետական կարգի մասնամասն նկարագիրը և ընդգծում վերջինիս հետ առնչվող հեղինակի ներկայացրած առանձնահատկությունները: Միաժամանակ Մաքաուլեյը ներկայացնում է կառավարման հանրապետական համակարգը և վերջինիս հետ կապված առանձնահատկությունները հակադրելով այն կառավարման միապետական կարգին: Բնութագրելով իր և Հոբսի քաղաքական տեսակետները հեղինակը ապացուցում է հանրապետական համակարգին իր հակվածությունը:

Эля ГИАСЯН

Особенности монархического и республиканского систем правления в соответствии со взглядами Катарины Маколей и Томаса Гоббса

Ключевые слова: республика, монархия, правительство, общество, правительство

Катарина Маколей в своей работе представляет подробное описание систем правления в особенности монархию поднятые в книге Томаса Гоббса и подчеркивает связанные с этой формой правления особенности. Одновременно Маколей представляет республиканскую систему правления и связанные с ним особенности противопоставляя ее монархической системе правления. Описывая ее и политические взгляды Гоббса автор доказывает свою приверженность республиканской системе.

Elya GHIASYAN

Picularities of Monarchical and Republican systems according to Catharine Macaulay and Thomas Hobbes

Key words: republic, monarchy, ruling system, society, power

Catharine Macaulay in her work represents the description of the ruling systems specifically the monarchical system mentioned in the book of Thomas Hobbes and highlights the picularities related to it represented by the author. Simultaneously Macaulay represents the republic system and the picularities associated with it conctrasting it with monarchical system. Describing her and the political views of Hobbes she proves her commitment to the republican system.